

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ

Գ. Մ. ՄՈՒՐԱՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1991 թ. 2-րդ համարում ակադ. Գևորգ Զահուկյանը հայերեն մի խումբ բառերի ստուգաբանությունը վերաբերող հոդված է հրատարակել (էջ 36—44): Անվանի լեզվաբանի կոահումները, ենթադրություններն ու առաջադրած վարկածները անվերապահորեն կարևոր են և ուշագրավ, բայց և մասամբ կարոտ լրացման կամ վերաբնութայն: Մեր խոսքը վերաբերում է, մասնավորապես, վրացերենի իրողություններին, առնչվող օրինակներին: Կան դեպքեր, երբ կարելի է դիտնականի կոահումը հավաստող փաստեր ավելացնել, իսկ առանձին ստուգաբանությունների ժամանակ ճշգրտել կամ նույնիսկ մերժել վարկածը:

Փեզ: Հայերենում շավանդված այս բառը Գ. Զահուկյանը վերականգնում է հնդեվրոպական *uegʰ* արմատի և քարթվելական լեզուներում առկա *gza. zaʼ(n)gza* բառերի հիմամբ, վերջիններս համարելով հայերենից փոխառյալ: Ի հաստատումն կոահման պիտի ավելացնել, որ հայերենի համար ենթադրվող օգեզ ձևը առկա է վրացերենում՝ *gez-i* և նշանակում է «ուղի, ճանապարհ, ուղղություն, արահետ, ծուռ ճամփա, զարտուղի»: Սվանական տարբերակի բացակայությունը թելադրել է Գ. Կլիմովին եզրակացնելու, որ *gza-*ն վրաց-զանական լեզվական միասնության շրջանին է վերաբերում², ընթե իրական է հայերենից փոխառյալ լինելու Գ. Զահուկյանի դրույթը, ապա հնդեվրոպական արմատի և նրա հայերեն տարբերակի արմատական *e-*ի չզույլությունը քարթվելական լեզուներում բացատրելի է սրղմամբ և ժամանակագրվում է վրաց-զանական միասնության շրջանով:

Թափ: Թե որքան է օրինաչափ այս արմատի աղբյուրը հնդեվրոպական *xsteph* «հնարավոր տարբերակի ձայնադարձային և առանց *XS-*ի ձևը՝ *xtaph-*ը» համարելը, դժվար է ասել: Համենայն դեպս, Գ. Զահուկյանն առաջինն է (մինչ այս եղած ստուգաբանությունները տե՛ս ՀԱԲ, II, 165), որ պատճառաբանված վարկած է առաջարկում: Մենք հույժ կասկածների ենք նկատում թափառել, հետևաբար և թափառ, թափառական, թափառաբ, թափառակի և նման այլ կազմությունների իմաստավորումը իբրև սկզբնական «հատակ, տակ, խորք իմաստի հետ կապված և սրանից ածանցված» զարգացումների: «Շրջել, շրջում, ման գալ, աստանդական լինել, սար ու ձոր ընկնել» և նման այլ հասկացությունները ոչ մի կերպ չեն կապվում Աստվածաշնչում վկայված թափ անցանքի, թափանցել ձևերի սկզբնական իմաստին, առավել ևս որ՝ նույն աղբյուրը գիտե նաև թափառել (Նրեմ., II, 22) և թափառական (Նրեմ., Ի, 3, ԽԹ, 36) եզրերը:

Մեր համոզմամբ, թափառել/թափառիլ բառը և դրանից ածանցված բազմաթիվ տարբերակները հանգում են վրացերեն *mta* և *bar-i* (սար և դաշտ, հարթություն) բառերի համադրությանը: Ճիշտ այդ բարդությանը են կազմված վրաց. *mo-mtabar-e* (թափառող, վաշկատուն, ոչ բնիկ) տերմինը և *mo-mtabar-e-aba* բայանունը: Բացատրություն է պահանջում *mta* բառի նախադիր *m-*ի բացակայությունը հայերենում: Քարթվելական լեզուները գիտեն ոչ քիչ դեպքեր, երբ բառարմատին հարող նախադիր *m-*ը երկրորդային կազմավորում է (հմտ. *(m)twer-i* փողի, մոխիր, *(m)tret-i* աղավնի ևն): Թերևս անհավանական չդիտվի և մեկ այլ հնարավորություն՝ երկրորդական *m-*ի անկում հայերենում: Բոլոր պարագաներում փոխառության փաստն առկա է:

¹ Նման իրողություններ կան Գ. Զահուկյանի փաստալից ու շահեկան մեկ այլ հոդվածում ևս: Տե՛ս Գ. Բ. Ժաուկյան. О времени ранних армяно-картвельских контактов (Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья в сопредельных областях, Ереван, 1990, с. 107—115).

² Գ. Ա. Կիմով, Этимологический словарь картвельских языков, М., 1964, 62-63.

Հետաքրքիր է, որ ս. Գրքի վրացերեն խմբագրություններում արտահանակաճ, վտարաճեղի և պանդուխտ նշանակությամբ գործածվում է ոչ թե մեզ հետաքրքրող mo-mtabar-e-ն, այլ՝ gardasaxiebul-i-ն:

Թափառել, բափառական տերմինների վրացերենից փոխառյալ լինելը պատմաազգագրական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

Ի դեպ՝ bar-ի «դաշտ, հարթություն» տերմինը հալ իրականությանը ծանոթ է նաև Կողբոփոր դավառում քտնվող «Բարանա» (տեղական արտասանությամբ «Բրանա») տեղանվամբ:

Փրևիս, փիշիս, Թվարիկելով եղած բացատրության փորձերը և այդպիսիք սներավարար նկատելով, Գ. Ջահուկյանը եզրակացնում է. «Բառս անհայտության վրացական կերպարանք ունի, սակայն Բ՝ՆՃԻ «ցախ» բառը իմաստով քիչ է համապատասխանում, իսկ Բ՝ՆՎԻ «մի տեսակ մայրի» բառը հայերենի մեջ մտել է փիշի ձևով» (էջ 43):

«Վրացական կերպարանք» կառուցում ճիշտ է, սխալ է թե՛ այն պիսի առնչել ոչ թե Բ՝ՆՃԻ-ի կամ Բ՝ՆՎԻ բառերին, այլ Բ՝ՆՃԻ-ի ածականին, որ հին վրացերենում նշանակում է բաբկ, թե՛, խիստ, սաստիկ, մասամբ խմբակները սահմանելով նաև նոր վրացերենում (տաքարյուն, դյուրարորոր, շտապող են): Որ հատկանիշով կարող է բուսանուն կազմվել՝ հայտնի է (տաքդիդ, կճան...): «Մարդու ուժ տալու համար դեղոյ կարգին» դասվող բույսը, Ղ. Արիշանի բնորոշմամբ «տեսակ մի բաղեղան» է՝ անվանակոչված ըստ հատկանիշի: Վրացերեն Ը-ի դիմաց հայերենում ճ/չ ունենալը հուշում է, թե փոխառությունը կատարված պիտի լինի զաներենից:

Քուրդ: Բառի ստուգարանության փորձին վերաբերող որևէ դիտողություն չունենք: Կարծում ենք, սակայն, որ նրա «հին շորի անպետք կտոր, ցնցոտի» և նման այլ նշանակությունները հուշում են համեմատության առնելու «Շուշանիկի վկայաբանության» հին վրացերեն խմբագրությունում ավանդված ցիլակ'ցիլա տերմինը: Հանգուցյալ պրոֆ. Ի. Աբուլաձեն արդեն նկատել է նրանց առնչությունը⁴, իսկ տողերիս հեղինակը առիթ է ունեցել ճշտելու նրա առարկայական համապատասխանությունը հայերեն խմբագրության մեջ վկայված «Աղօթանոցին»⁵:

Վրացերենին առնչվող մի ստուգարանությամբ վերջերս հանդես եկավ լեզվաբան Ի. Ղազարյանը («Բանբեր Երևանի համալսարանի», 1991, № 3, էջ 141—145): Նա քննության է առնում «Քարթլիս ցխովրեբայի» հայերեն թարգմանության մեջ ավանդված «սեն, փորի» արտահայտությունը և, մերժելով Ղ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» (հ. 4, էջ 200) ստուգարանությունը, «ճշգրտում է բառիս ծագումն ու իմաստը» (էջ 142). այն է՝ վրաց. sen-ի (հիվանդություն, ցավ, վարակ) և հայ. «փոր», ուրեմն՝ «սեն փորի» նշանակում է «փորի հիվանդություն, ցավ»: Եթե հոգվածագիրը ծանոթ լիներ «Քարթլիս ցխովրեբայի» հայերեն թարգմանության գիտական հրատարակությանը (Ի. Աբուլաձեի աշխատասիրությամբ, Թբիլիսի, 1953), ապա չէր վարանի հիշելու նաև sen-ի բառի գրաբարյան ստույգ համապատասխանությունը՝ «ախտ» (էջ 98, 99): Ցավալին, անշուշտ, այդ վրիպումը չէ, այլ այն, որ Ի. Ղազարյանը հետևողական անտեղյակությամբ

⁴ Ղ. Արիշան, Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն, Վենետիկ, 1895, էջ 630:

⁵ Տե՛ս Ցակոր Ցուրտաւեցի, Վկայաբանութիւն Շուշանկայ, Թբիլիսի, 1979, էջ 92 (վրացերեն):

⁶ Հմմտ. «Պատմա-բանասիրական հանգես», 1991, № 1, էջ 142: Ակադ. Գ. Ջահուկյանի վերջերս հրատարակած «Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին» հոդվածում ես (տե՛ս «Պատմա-բանասիրական հանգես», 1992, № 1, էջ 14—21) կան ստուգարանություններ, որոնք կարող էին ստուգվել կամ լրացվել վրացերենի իրողություններով: Մասնավորապես մեր խոսքը վերաբերում է աղալք-աղալքի (վրաց. locua), բճալ, ձուռ (վրաց. zguent), աղալի (վրաց. alersi), սուրբ (վրաց. cmida), զոռ (վրաց. zorva) և որոշ այլ բառերի: Այս շարքում սպասելի էր նաև կարգալ (վրաց. klitxu) պաշտամունքային տերմինի ստուգարանության քննություն:

զանց է առնում այդ տերմինի ճշգրտմանը վերաբերող ողջ գրականությունը: 2. Աճառյանի առաջարկած ստուգաբանությունը ի. Արուստիանի անդրադարձել է 1941 թ. Երևանում լույս տեսած «Քարթլիս ցխովբերայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը» հոդվածում («Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», I, էջ 39: Վերահրատարակված է գիտնականի «Աշխատությունների» 4-րդ հատորում, Թբիլիսի, 1985, էջ 161): Նրա կանխիկ հղումը «սենեբի»-ը (և ոչ «սենեբի») «բարդ բառ է, բաղկացած երկու բառերից՝ մեկը «սեն» ու մյուսը «փոր», որով արտահայտված է վրացերենի *seni* (կամ *seneba*) *muclisa*, միայն այնպես, որ առաջին բառը թարգմանված չէ: Այս իրողությունը արտացոլված է նաև «Քարթլիս ցխովբերայի» հին հայերեն թարգմանությանը կից բառարաններում (էջ 265 և 313): 2. Աճառյանը, ինչ խոսք, չէր վրիպի նկատել իր աշակերտի ուղղումը. և իրոք, «Հայոց լեզվի պատմության» երկրորդ մասում (Երևան, 1951, էջ 225) նա գրում է. «Սեն ցավ». այս բառը մի անգամ գործածված է Պատմ. վր. 108 սենեփորի ձևով: Իմ Արմ. բառարանում մեկնել եմ իրր հուն. *συνφρυ*՝ «զանազան հիվանդությունների հավաքում»: Վրացերիտասարդ գիտնական սիրելին ի. Արուստիանի գտավ, որ սխալ է այս համեմատությունը. վրացերեն բնագիրն ունի սենի մուցլիսա «ցավ փորի», որից հետևում է, որ հայ բառն էլ պետք է ուղղել սեն փորի, որով սեն դառնում է վրացերենից փոխառյալ բառ (տե՛ս գիտ. նյութերի ժող., № 1, 1941 թ., էջ 30 բ)»: Աշակերտի ուղղմամբ ոգևորված գիտնականը չի վարանել այդ իրողությանն անդրադառնալ նաև իր «Կյանքիս հուշերից» զրքում:

Այս ամենից հետո զարմանալի է, որ Ռ. Ղազարյանը, ոչինչ նոր ասելիք չունենալով՝ անհաղորդ է մնացել մասնագիտական գրականությանը և «սպացուցել» այն, ինչ այլևս հայտնի էր 50 տարի առաջ: Եթե ժամանակին հոգ տարվեր և «Արմատական» առաջին հրատարակությունից հետո լույս տեսած 2. Աճառյանի (գուցե և այլոց) բոլոր սրբագրությունները արտացոլվեին համապատասխան բառահոգվածներում, ապա հայագիտությունը շատ կրկնություններից, առավել ևս «հայտնագործություններից» կազատվեր:

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ КОРРЕКТИВЫ

П. М. МУРАДЯН

Резюме

В статье акад. Г. Б. Джаукяна (ИФЖ, 1991, № 2, с. 36—44) представлены этимологии ряда армянских слов. Некоторые из них, в частности учитывающие лексические материалы из истории картвельских языков, на наш взгляд, нуждаются в коррективах или дополнениях. Так, восстанавливаемое ученым несохранившееся в армянском слово *gez употребляется в современном грузинском языке (*gez-i*—дорога, путь, линия), термины же *tʰarʰaɾel* и *tʰarʰaɾakan* образованы не на основе и.-е. *terh, а в результате сочетания двух грузинских слов *-(m)ta bar-i* (гора + равнина). Правильно замечено, что армянское название растения *reʰsx/reʰsɛx* «имеет грузинский вид», но его следует возводить не к *reʰɬx-i* или *reʰɬv-i*, а к прилагательному *reʰɬx-i* (проворный, горячий, ретивый), слово же *keʰɬ* находится в непосредственной связи с груз. *giriak/giriʒa* (лохмотья, отрепье).

Вызывает недоумение толкование выражения *sep rogi* из древнеармянского перевода свода «Картлис цховреба» в статье Р. С. Казаряна («Вестник Ереванского университета», 1991, № 3). То ли не будучи знакомым с имеющейся литературой, то ли сознательно обходя ее, он повторяет то, что давно установлено проф. И. В. Абулалзе и признано акад. Р. Ачаряном.